

Муниципальное У.

Учреждение культуры


Учреждение культуры

Муниципальное учреждение культуры

ԱՐԳԱՆՏԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՅԵԳԻՏՏԵԿՆԵ ԻՆՆԵՐՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅՈՒԳՎԱՄ Է
1952 թ.



371 (47.925)
7-26

371 (479.25)

✓

Ե.Չ.Գ.Ե.Յ.Ի.Ն ԻՆՎԵՐՆԵՐ

Ե.Չ.Գ.Ե.Յ.Ի.Ն ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՀԵՅԵԳԻՏԵԿԵՆ ԻՆՎԵՍՏՄԵՆՏԱԿԱՆ ԻՆՎԵՍՏՄԵՆՏԱԿԱՆ

~~62201~~

A II
66765

Վ.Ե.Բ.Գ.Ե.Ն ԳՐԱՏԵԿԵՆ



152

ԱՐԶԳԱՅԻՆ ԻՆՊՏՐՆԵՐ

Ա. ԱՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՓՈՒՆ
ՀԱՅ ԱԶԳԻ ԱՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՓԵԱՆ ՄԱՍԻՆ


ՊՆՏՐՆԵՐ 1911

Բ. ԱՐԶԳԱՅԻՆ ԿՐԹ ՈՒՓՈՒՆ
ԱՐՏԱՅԻՆ ՄԱՍԻՆ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒՓԵԱՆ ԿԱԶՄԱՆԻՐԱԿՈՒՄԸ
(ՈՒՓՈՒՆ ԿԵՐԻՔԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒՄԻ)

ՊՆՏՐ 1911

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊՆՏՐՆԵՐ 1911



1434

5335

Հ Ա Յ Ե Պ Ի Տ Ե Պ Ե Ն Ի Ե Ն Ե Ի Օ Ս Ի Ի Թ Ի Ի Ե Ն Ե Ի

Եւրոպայում գտնուող մեր գլխաւոր գաղութների կեանքը դիտելով, գժուար չէ նկատել նրանց գործունէութիւնը մարեգործական նպատակների շուրջ եւ այս գործունէութեան նշանակելի հետեւանքները:

Միտժամանակ, դիտելով գաղութային կեանքի այն երեւոյթները, որոնք մարեգործութեան շնորհիւ վերաբերուած, այլ ապացուցանուած են գաղութների մտաւոր, հոգեկան պահանջները, կը նկատուի որ շնայած թէ մեր գաղութները ոգեւորուած են բարձր զգացումներով, շարժումներով ու գիտաւարութիւններով զէպի ազգ եւ հայրենիք, այդ երեւոյթների հետեւանքները սովորաբար նշանաւոր չեն:

Եւ ուսումնասիրելով այդ երեւոյթները ու նրանց հետեւանքները, գժուար չէ տեսնել որ յիշեալ բարոյական զգացումներն ու շարժումները՝ իրենց ցանկալի ձեւաւորման եւ իրագործման համար սովորաբար հանդիպում են զանազան խոչընդոտների եւ արգելքների, որոնց հիմնական պատճառը թուում է լինել գլխաւորապէս թերութիւնը, երբեմն նաեւ բացակայութիւնը հայ ազգի եւ երկրի վերաբերեալ նախապէս ստացուած գիտութիւնների եւ յատկապէս հաւարուած տեղեկութիւնների, մի խօսքով ասած, ժամանակին ստացուած ազգային կրթութեան:

Բայց թէ կեանքը, եւ թէ հայրենասիրական շարժումները սովորաբար չեն սպասում, այլ մի որեւէ եղք են պահանջում:

Երբ, բնական է, որ զեկազարուած ենք ոչ այնքան գիտութիւններով, որքան հրապուրիչ հաճոյքներով ու շրջաբերուող կարծիքներով եւ վերցնում ենք այն տեղեկութիւնները, որոնք պատահաբար ձեռքի տակ են գտնուում. բայց շրջաբերուող կարծիքները եւ պատահական տեղեկութիւնները սովորաբար անկատար ու միակողմանի են, երբեմն նոյն իսկ սխալ ու անհիմն:

բնական է նշմարել, որ տեղեկութիւնների ու գիտութիւնների թերութիւնը ոչ միայն պատճառում է անվերջ զինարարութիւններ և գծուարացում է վճիռների որոշումը, այլ թուլացնում է և ոչնչացնում նրանց նշանակութիւնը:

Վերջին կիսադարի ընթացքում, գաղութային կեանքի մէջ իրենց ծագումը ունեցող ազգային շարժումներից, գոնէ միայն «բաղաբական» շարժումները ունեցան որոշ, բայց ստեղծեցին հետեւանքներ. սա այդ հետեւանքներն են որոնց հետ ուղիղ կերպով կապուած է մեր ազգի նշանաւոր մասի ոչնչացումը, ինչ որ ամենապարզ կերպով ապացուցանում է թէ հայաստանի շարժումները որքան կարող են լինել ֆուսսկար, մանուածդ եթէ մինչև անգամ ղեկավարները գուցէ անկեղծ բայց անկարող և արդէս լինեն. եթէ ղեկավարներն ոչ միայն տեղեկ չլինեն իրենց ստանձնած գործի զանազան պահանջների հանդէպ, այլ նոյն իսկ արդէս — իրենց ազգի ու երկրի մասին:

Սակայն հարկաւոր տեղեկութիւններ ու գիտութիւններ յաճախ արդէն կան, կամ կարող են գտնուել. պէտք է միայն զանազ կանխորեն ի յայտ բերել, մտաշիջի դարձնել ու տարածել. իրողութեան համապատասխանող եզրակացութիւնները և հետեւարար ճշտագոյն կարծիքները հետզհետէ ինքնին կը կազմուեն և կը հաստատուեն:

Այս հակիրճ նկատողութիւնների իմաստը թերեւս պարզում է թէ որչափ անհրաժեշտ է հայ ազգի ու հայրենիքի՝ այսինքն հայագիտութեան վերաբերուող տեղեկութիւնների տարածումը մեր գաղութային շրջաններում: Քնում է որ այս նպատակին ամենանպաստաւոր միջոցն է՝ կենդանի խօսքը, այսինքն բանախօսութիւնները: Այս որդէս զի այս բանախօսութիւնները մի տեսական և հաստատու խօսք նշանակութիւն և տարածում ունենան բնական է որ նորա լինին զիրիմաց և պահեն միաժամանակ իրենց գիտնական բնոյթը:

Հայագիտական բանախօսութիւնները պիտի ունենան սկիզբից ոչ միայն մի որոշ դասաւորում. այլ պիտի համապատասխանեն մի որոշ ընդհանուր ծրագրի:

Այս պահանջը ի նկատի ունենալով և միաժամանակ ենթադրուած բանախօսութիւնների ամբողջութիւնը պարզելու համար ներկայացնում եմ հետեւեալ ընդհանուր ծրագիրը:

Հ Ե Յ Գ Ի Տ Ե Կ Ը Ն Ի Է Ն Ե Լ Ի Օ Ի Ի Թ Թ Ի Թ Ն Ե Ն Ե Ի Բ

Ը Ն Գ Հ Ե Ն Ի Թ Բ Ծ Բ Ե Գ Ի Բ

Ա. Նախապատմական շրջան:

Նախապատմութիւն Հայոց:

Հայ ազգի ծագումը: Նախապատմական տեղափոխութիւնները: Աշխարհագրական համառոտ ակնարկ կայ բնակավայրերի վրայ: Մարդաբանական ու համառոտ լեզուաբանական համեմատական ակնարկներ: Ազգագրութիւն Հայոց Նախապատմական ժամանակում: Դասակարգեր ու նրանց պարապմունքը. Նախապատմական հոգեւոր կեանք. դիցաբանութիւն, հեթանոսութիւն:

Բ. Հայոց բնակավայրի բնութիւնը:

Աշխարհագրական, երկրաբանական եւ բնադրական նկարագրութիւն:

Գ. Պատմական հին շրջան (մինչեւ XIX դարի սկիզբը):

ա. Բնակչութիւն:

Ազգի դասակարգեր (աղնուականութիւն, հոգեւորականութիւն, քաղաքացիութիւն, գիւղացիութիւն), իրենց ընտանեկան, հասարակական եւ իրաւական կազմը:

բ. Տնտեսական նկարագրութիւն:

Պարապմունք, երկրագործութիւն, անասնաբանութիւն, հանքաբանութիւն, արհեստներ (պաստառ, մետաքս, գորգ . . .), Արեւատուր:

գ. Հոգեւորական կեանք, արուեստներ, գիտութիւններ:

Քրիստոնէութիւն (լուսաւորչական, կաթողիկէ, բողոքական):

Ճարտարապետութիւն:

Երգ, պար, երաժշտութիւն, նկարչութիւն:

Շէնքերի եւ ձեռագիրների զարգացումը:

Պատմագրութիւն, գիտութիւններ (բժշկութիւն եւ այլն):

դ. Պատմութիւն:

Ընդհանուր համառոտ ակնարկ ամբողջ շրջանի վրայ:

Մասնակի նկարագրութիւն այս շրջանից ընտրուած մի քանի կարեւոր փուլերի կամ դեպքերի:

ե. Հայ լեզու:

Հայ տառերը. Ձեռագիրներ, գրչագրական ակնարկ:

Ցպագրութեան հնարումը, իր տարածումը աշխարհում:

Հայ սպագրութեան սկիզբը ու տարածումը:

Կրթարարի պատմութիւնը, իր կազմը եւ յատկութիւնները:

զ. Հայ հին գրականութիւնը:

Ընդհանուր պատմական նկարագրութիւն:

Հին հեղինակներ: Հին թարգմանիչներ:

Գ. Պատմական նոր շրջան XIX դարի սկզբից մինչև 1914—1918 պատերազմի սկիզբը:

ա. բնակչութիւն:

Դասակարգեր (Տոգեւորականութիւն, քաղաքացիութիւն, գիւղացիութիւն), իրենց ընտանեկան, հասարակական եւ իրաւական կազմը:

բ. Տնտեսական կեանք:

Պարագմանք. արհեստներ, արեւտուր:

զ. Հոգեւորական կեանք, արուեստներ, գիտութիւններ:

Հայ եկեղեցիներ:

Հարստարայեաութիւն:

Երգ, երաժշտութիւն, թատրոն:

Նկարչութիւն:

Պատմագրութիւն, գիտութիւններ:

դ. պատմութիւն Հայոց:

Ընդհանուր համառոտ ակնարկ ամբողջ շրջանի վրայ:

Պատերազմներ հայոց բնակավայրերում եւ նրանց հետեւանքները:

Հայ գաղթականութիւններ:

Հայկական հարցի ծագումը եւ իր պատմութիւնը:

Մանկիկ նկարագրութիւն այս շրջանից ընտրուած մի քանի փուլերի կամ դեպքերի:

ե. Աշխարհարար գրաւոր լեզու:

Լեզուի ձեւակերպումը ու զարգացումը:

Գլխաւոր բարբառներ եւ իրենց յատկութիւնները:

զ. Նոր գրականութիւն:

Ընդհանուր պատմական նկարագրութիւն: Հեղինակներ. թարգմանիչներ:

է. Լեզու իրրեւ ազգի զարգացման աստիճանի ապացոյցը:

Ն. Ներկայ շրջան:

Ժամանակակից պատմութիւն հայ ազգի եւ Հայաստանի վերածնունդը:

Հայաստանի ներկա դրութիւնը:

Հայ գաղութներ, տեղային գաղութ:

Այս ընդհանուր ծրագիրը հիմնուած լինելով պատմական սկիզբունքի վրայ, ենթադրուած է ազգային լեզուի իրրեւ ազգի ընդհանուր զարգացման աստիճանի ապացոյցի նշանակութիւնը. այս տեսակետի համաձայն ծրագրի մէջ գտնուող նիւթերը ստացան իրենց դասաւորումը եւ հայ լեզուն ամեն պատմական շրջանում գրաւեց վերջին, գլխաւոր տեղը:

Ներկայացուած ընդհանուր ծրագրի քննադատութիւնը ի յայտ կը բերի նրա պակասութիւնները, մանաւանդ ծրագրի իրազարման ժամանակուսմ. հետեւաբար մի ուրիշ, աւելի նպատակայարմար ընդհանուր ծրագիր կը մշակուի: Քաջ անհրաժեշտ է թուում, որ սկզբից մի որոշ ընդհանուր ծրագիր ընդունուած լինի, շնայած որ որեւէ ընդհանուր ծրագիր, այսկամ այն, կարելի չէ իրազարմել լիովին:

Անհրաժեշտ է թուում սկզբից ղեկավարուել մի որոշ ընդհանուր ծրագրով, որպէս զի նրանից վերջուեն այն նիւթերը կամ սրանց մասնաճիւղերը, որոնց մասին այս թէ այն քաղաքում գտնուող մասնագէտները կարող են ստանձնել համապատասխան բանախօսութիւնները. այս վերջինները կ'որոշեն ընթացիկ տարուայ մէջ գործադրելի ծրագիրը եւ նրա նիւթերի գատնութիւնը:

Պէտք է որ մի որոշ ընդհանուր ծրագիր ոչ միայն ընդունուի, այլ նաեւ միշտ աշքի առջեւ գտնուի, որպէս զի նրա բաղադատումը ընթացիկ տարուայ մէջ գործադրելի ծրագրի հետ պարզ կերպով ապացուցանի թէ հայագիտութեան որ ճիւղեր տակաւին բանախօսուած, կամ թերեւս դեռ բուական ուսումնասիրուած չեն եւ հետեւաբար թէ ինչ ճիւղեր մեծ է ուսումնասիրել եւ ինչ բանախօսութիւններ պէտք է ջանալ պատրաստել գալիք տարիներում:

Միայն այս պայմաններում հայագիտական բանախօսութիւնների ամբողջութիւնը իրապէս կը կազմի հայ ազգի քաղաքաբնութեան որքան կարելի է լիակատար նկարագրութիւնը:

Այսպիսի մի յաջորդական աշխատանքի եական արդիւնքը կը լինի այն որ մենք կ'ունենանք տարածուած որոշ եւ հաստատ գիտութիւններ մեր ազգի եւ հայրենիքի մասին, կը գիտանանք եւ կը գիտակցենք թէ ինչ մենք ունենք եւ թէ ինչ մեզ պակասում է:

Հայագիտական գիտութիւնների ու տեղեկութիւնների տարածումը մեր ազգակիցների մէջ մեզ ի հանդէս կը բերի մեր ազգային բնութիւնը եւ կը պարզի նրա յատկութիւնների սկիզբնական պատճառները. կ'ապացուցանի մեր ազգային առաւելութիւնները, զորոնք պիտի ջանանք պահել, հաստատել ու զարգացնել. բայց, ինչ որ թերեւս աւելի կարեւոր է, այս բոլորը կ'ապացուցանի միաժամանակ մեր պակասութիւնները եւ նրանց պատճառները, զորոնք պիտի սկսենք եւ ջանանք բուժել եւ ջնջել արմատաբար:

Չկրճ ի վերջոյ, տարածումը եւ հաստատումը մեր մէջ այն գիտութիւնների ու տեղեկութիւնների — որոնց հետ մեր ամբողջ բնութիւնը խոր եւ սերտ, անջնջելի կապեր ունի — չէ կարող չազգել մեր՝ զանազան երկիրներում գտնուող հայրենակիցների մտայնութեան վրայ. չէ կարող դարձնել մեր բոլոր ազգա-

կիցներին ի յայտ չբերել մեր հասարակցութեան կապերը (liens de communauté) եւ հետեւաբար չէ կարող շագահոյնել եւ շատաւաւել ազգային համընթացութեան գիտակցութիւնը մեր բոլոր գաղութների մէջ:

Հայագիտական բանախօսութիւնների աւազին փորձը անելու համար աննայաբար քաղաքը թւում է լինել Վիեննա, ուր իր նիստը ունի մեր համընթացութեան Վիեննայի Գիտական Գիտաբանութիւնը:

Մեծ եւ ծանօթ է Միտիմարեանների կատարած գերը ամբողջ հայութեան առջեւ հայագիտութեան ասպարեզում: Ներկայ ձեռնարկութեան մէջ՝ հայագիտութիւնը տարածելու գործունէութեան մէջ, Միտիմարեանների գերը նշուպէս միայն տեղային հայ գաղութով սահմանափակուած պիտի չի մնայ, այլ պիտի տարածուի նաեւ ուրիշ հայ գաղութների մէջ, եւ թերեւ նաեւ հայութեան մէջ՝ երբ բանախօսութիւնները տպուած լինելով կը ստանան իրենց տարածումը:

Առաջարկուած հայագիտական բանախօսութիւնների արժէքը կարող է եթէ ոչ ամբողջովին գտնէ մեծ մասամբ ապահովուած լինել Հ. Հ. Միտիմարեանների ուժերով:

Սակայն, այս բանախօսութիւնների նշանակութիւնը, տեղային գաղութի մէջ եւ մի շարքով հայութեան համար, կը լինի թերակատար, եթէ գաղութի այն անձերը, որոնք պատշաճ պատրաստութիւն եւ կարողութիւն ունին, չմասնակցեն իրրեւ բանախօսանք իրենց ծանօթ նիւթերի մասին, լինի այս նիւթը զուտ գիտական, լինի արուեստական, լինի առեւտրական եւ այլն:

Գաղութային այսպիսի անդամների մասնակցութիւնը բանախօսութիւնների մէջ կ'ունենայ այն կարեւոր նշանակութիւնը որ այս անձերը կը կարողանան, նաեւ բանախօսութիւններից դուրս, անմիջապէս, ամենօրեայ կեանքի մէջ, տարածել ու հաստատել, ամէնը իր շրջանում, պէտք եղած հետաքրքրութիւնը հայագիտութեան վերաբերմամբ: Այս անձերը կարող են լուսազոյն կերպով նպաստել որ հայ գաղութներում մի որոշ պահանջ ամբանայ վերաբերմամբ հայագիտական բանախօսութիւնների, որպէս զի այս վերջինները դառնան տեւական, եւ ստանան մի մշտական կազմակերպութիւն:

Հաս կարեւոր է նաեւ աշխատել որ տեղային օտար հայագէտները նշուպէս բարեհասնեն մասնակցել իրրեւ բանախօսանք իրենց հայագիտական ճիւղերում: Սա մի կապ կը կազմէ հայ բանախօսանքի եւ տեղային օտար գիտական շրջանների մէջ ի նպաստ հայագիտութեան:

Վիեննա, Հոկտեմբեր 1928




ԳՐԱԾԱՆՈՒԹՅԱՆ

~~USN 94... 1971~~

371
Պ-2

Գ Ֆ 432-
15 Հոկտեմբեր 1913
Մեխանիկական տարրեր

[10.]



A $\frac{II}{66765}$

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԳԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ



220066765